




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր լեռների, միացե՛ք

ԱՅՈՒԵԿԱՅԵԱՆԻՆ ՏՕ-
ՇԻԱԼԻՏԺՄԻ ՓԵԼԵ-
ԿԱԹՈՒԼԻ ՏԱԶՈՒԹԱ
ԿԵՏՅԱԼԻԿԱ



Zakafkasja 3yra
Federatíf Sosjalist
Cumhyrijjati

Յ. Շ. Փ. Շ. Ք.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ՍՈՑԻԱԼԻՏՏԱՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վ Ո Ր Ո Ճ Ո Ւ Մ Ն Ե Ր

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

III ԳՈՒՄԱՐՄԱՆ 2-ՐԻ ՆՏԱՇԵՐՁԱՆԻ



342
Վ-11

ԴԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՒՄԻ
Յ Ե Ր Շ Փ Ք
1926

342

4-11

✓

01 MAR 2010

05 FEB 2010

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

II-Դ ՆՍՏԱԾՐՁԱՆԻ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

III ԳՈՒՄԱՐՄԱՆ

79 FEB 2013

34443

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ III ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ Զ-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

1. ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի նախագահ ընկ. Մ. Որախելաժիլու զեկուցման վերաբերմամբ:

Հսկելով ԱՍՖԽՀ կառավարության՝ Անդրկովկասի խորհուրդների 3-րդ Համագումարից հետո ունեցած գործունեության մասին ԱՍՖԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Մ. Որախելաժիլու տեղեկատու զեկուցումը, Անդրկենտգործկոմի III գումարման 2-դ նստաշրջանը ամբողջապես հավանություն է տալիս կառավարության կատարած աշխատանքին:

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Մ. Յխակյա

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ա. Շահվերդյան

1926 թ. հունվարի 26-ին:
Յերևան:

(24214-60)

29507-61

2. Հայաստանի Սև Հ ժողովարհի նախագահ ընկ. Ս. Հաֆարձու-
մյանի զեկուցման վերաբերմամբ:

Լսելով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրա-
պետության Կառավարության զեկուցումը, Անդրկենտրոնական 2-դ
Նստաշրջանը, բավարարության նշելով տնտեսական և կուլտու-
րական շինարարության խոշոր առաջադիմությունը մի յերկրում,
վոր դեռ նորերս գտնվում եր իմպերիալիստական և միջազգային
պատերազմներից հասցրած խորը վերքերի մեջ, ամբողջապես հա-
վանություն և տալիս Խորհրդային Հայաստանի Կառավարության
գործունեությունը:

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Մ. Յխակոյա

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ա. Շահվերդյան

1926 թ. հունվարի 27-ին:
Յերեան:

3. ՍՍՀՍ-ի սեփական գրության մասին ընկ. Ս. Լուկաչևի զե-
կուցման վերաբերմամբ:

Լսելով յերկրի տնտեսական դրության մասին զեկուցումը,
Անդրկենտրոնական 3-դ գումարման 2-դ Նստաշրջանը բավարա-
րության նշում և յերկրի գյուղական տնտեսության բոլոր ճյու-
ղերի անցած տարվա ընթացքում տեղի ունեցած ընդհանուր բարձ-
րացումը, լիովին հավանություն և տալիս ձեռք առած այն մի-
ջոցներին, վորոնց նպատակն և յերկրի աշխատավորների ահա-
գին մեծամասնության տնտեսության հետագա զարգացման ապա-
հովումը:

Առանձնապես ընդգծելով գյուղական տնտեսության ինտեն-
սիֆիկացիայի համար ձեռք առած միջոցների նշանակությունը,
ինչպես որինակ, առաջի հերթին, բարձրագույն և արդյունաբերա-
կան հում մշակույթների շրջանների տրակտորիզացիան և պա-
րարտացումը, յերկրի վոռոգման ցանցի սխտեմատիկ բարելավումն
ու լայնացումն, գյուղացիական լայն խավերի գրավումն դեպի
կոոպերացիան, վարկային ոգնության ուժեղացումը, առանձնապես
գյուղական տնտեսության արտադրությունները պատրաստելու,
վերամշակելու և վաճառելու կազմակերպության բարելավումը,
Անդրկենտրոնական Նստաշրջանը հանձնարարում և Նախագահու-
թյանը արագացնել աշխատանքները ավարտելու համար գյուղա-
կան տնտեսության վերաբերյալ ձեռք առնելիք միջոցների հինգ-
ամյա ծրագիրը և ներկայացնել նրան հետագա Նստաշրջանի հա-
վանությունը:

Հավաստելով յերկրի արդյունաբերության աճումը, վորը իր
վերականգնման պրոցեսում մոտեցել և նախապատերազմական վի-
ճակի աստիճանին, Նստաշրջանը հավանություն և տալիս յերկրի
հետագա ավելի գործոն ինդուստրիալիզացիայի քաղաքականությա-
նը և համապատասխան խորհրդային մարմինների ուղղորդությունն
և դարձնում վորակյալ բանվորական և տեխնիկական աշխատա-
կիցներ պատրաստելու և արդյունաբերական պրոլետարիատի կեն-
ցաղի ընդհանուր բարելավման համար միջոցներ ձեռք առնելու
վրա, աշխատանքի արտադրականության բարձրացման և ձեռնար-
կությունների տեխնիկական ուսցիտնալիզացիայի հիման վրա:

Նույն նպատակներով Նստաշրջանը հանձնարարում և Նա-
խագահությունը անհապաղ դիմել կազմակերպելու անդրկովկասյան
պետական մարմինների կազմի մեջ փողովրդական Տնտեսության
Գերագույն Խորհուրդ, իրրե արդյունաբերությունը ղեկավարող

յերկրային մարմին, հրատարակելով համապատասխան կանոնադրութիւն, վորը հետագայում ներկայացնելու յե Անդրկենտգործկոմի Նստաշրջանի կամ Անդրկովկասի Խորհուրդների Համագումարի հավանութեանը:

Միևնույն ժամանակ Նստաշրջանը անհրաժեշտ ե համարում, վոր հետագա տնտեսական տարվա սկզբից վոչ ուշ վերջնականապես ձևակերպված ե համապատասխան մարմինների միջոցով հաստատված լինի առաջիկա հինգամյակի ձեռք առնելիք արդյունաբերական միջոցների ծրագիրը:

ԱՍՖՆՀ տնտեսութեան զարգացման համար ահագին նշանակութիւն տալով փոխադրութեան բարելավմանը, վորը յետ ե մընացել գյուղատնտեսութեան ե արդյունաբերութեան աճումից, Նստաշրջանը Նախագահութեան ուղադրութիւնն ե դարձնում փոխադրութիւնը բարձրացնելու համար ձեռք առնելիք միջոցների ուժեղացման վրա:

Նստաշրջանը առանձնապես կարևոր ե համարում ընդգծել խճուղային ե սայլի ճանապարհների նշանակութիւնը մեր յերկրի պայմաններում: Հետագայում ես անհրաժեշտ համարելով ամեն կերպով ուժեղացնելու ճանապարհային շինարարութեան համար միջոցների բյուջետային հատկացումները, Անդրկենտգործկոմի Նստաշրջանը իրական ե յերկրի տնտեսութեան, առանձնապես գյուղական տնտեսութեան աճման հետ միասին ընթացող Անդրկովկասի Հանրապետութիւնների խճուղային ե մասնավորապես սայլի ճանապարհների ցանցի վերականգնման համար անհրաժեշտ ե համարում գրավելու դեպի ճանապարհների տեղական շինարարութեան գործն ազգաբնակչութիւնը, վորը իր կամքը արտահայտում ե տեղական նույն ազգաբնակչութեան համապատասխան խորհրդային մարմինների միջոցով: Սույն նպատակով նա հանձնարարում ե Նախագահութեանը հրատարակել համապատասխան դեկրետ, վորով նախատեսված լինի ազգաբնակչութեան տեղական ճանապարհային շինարարութեան գործին գրավելու պայմանները ե կարգը:

Ընդ սմին Նստաշրջանը անհրաժեշտ ե համարում, ժողովրդական տնտեսութեան հետագա զարգացման գործը կանոնավորապես դնելու նպատակով, արագացնել Անդրկովկասի Հանրապետութիւնները ռայոնների բաժանելու վերաբերյալ աշխատանքները:

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահ՝ Մ. Յխսկայա

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Ա. Շահվերդյան

1926 թ. հունվարի 29-ին:
Յերևան:

4. ԱՍՖՆՀ 1925—26 թ. պետական յեվ «եղական բյուջեի մասին ընկ. Մ. Գ. Հուսեյնովի զեկուցման վերաբերմամբ:

Անդրկենտգործկոմի III գումարման 2-րդ Նստաշրջանը, լըսելով ԱՍՖՆՀ 1925—26 թ. պետական ե տեղական բյուջեի մասին Անդրֆինոզկոմ ընկ. Հուսեյնովի զեկուցումը, լիապես հավանութիւն ե տալիս Անդրկովկասյան Կառավարութեան ֆինանսական բաղաքականութեանը ե ընդունում ե Միութենական Ժողկոմխորհի կողմից հաստատած բյուջեն: Միաժամանակ Նստաշրջանը՝

I. Հավաստում ե, վոր ԱՍՖՆՀ 1924—25 թ. պետական բյուջեն յերկրի առաջին կանոնավոր կազմած բյուջեն եր. նրա իրագործումը ցույց ե տալիս, վոր, չնայելով մի քանի պակասութիւններին, նա արդեն իր տակը ուներ հաստատուն հող: 1925—26 թ բյուջեն, թեկ կառուցված ե, հաշվի առնելով անցած տարվա բյուջեի փորձը ե պակասութիւնները, այնուամենայնիվ նա վերջանում ե մեծ բացով, ինչպես ե նախկին տարիների բյուջեները: Թեկ անդրկովկասյան բյուջեի բացը ավելի մեծ ե, բան մյուս Միութենական Հանրապետութիւնների (ՌՍՖՆՀ ե Ուկրայնայի) բացերը, բայց աչքի առաջ ունենալով յերկրի գյուղատնտեսութեան ե արդյունաբերութեան որեցոր ուժեղացող վերականգնումը, հենց առաջիկա տարին հնարավոր կլինի սույն բացը խոշոր չափով կրճատելու, իսկ հետագայում նույնիսկ ամբողջապես վերացնելու:

Անդրկենտգործկոմի Նստաշրջանը նշում ե, վոր Անդրկովկասի բյուջեի բացի վերաբերյալ հարցը մեծ չափերով կախված ե նույնպես Միութենական Հանրապետութիւնների հասոյթային մասի ուժեղացնելուց ե սույն նպատակով անհրաժեշտ ե համարում ՍՆՀ Միութեան Կենտգործկոմի հենց առաջիկա նրա Նստաշրջանին հարց հարուցել Միութենական Հանրապետութիւնների բյուջետային իրավունքների վերաքննութեան մասին: Անդրկենտգործկոմի Նստաշրջանը հանձնարարում ե Անդրկենտգործկոմի Նախագահութեանը ՍՆՀ Միութեան ե Միութենական Հանրապետութիւնների բյուջետային իրավունքների վերաքննութեան վերաբերյալ մշակել համապատասխան նախագիծ ե Անդրկենտգործկոմի անունից ներկայացնել ՍՆՀ Կենտգործկոմին:

II. Անցած տարին հող ե պատրաստել, վորպեսզի արդեն այս տարի Անդրկովկասում խոշոր չափով իրագործվի՝ պետական բյուջեն գլխավորապես վոչ-հարկային հասույթների վրա հիմնելու մասին ՍՍՀ Միության Կենտրոնական 3-դ Նստաշրջանի վորոշումը։ Այս տարի վոչ միայն ԱՍՖՍՀ վոչ-հարկային հասույթները աճում են, ներառյալ նոր, յերկրի ընդերքից ստացվող հասույթները, այլ նույնիսկ առանց նրանց վոչ-հարկային հասույթները, համեմատելով անցյալ տարվա փաստական իրագործման հետ, նախատեսված են մեծ աճումով։ Նույնպես և ավելացել են հարկային հասույթները, թե արդյունաբեր զբաղման, թե յեկամտային հարկը։

III. Ի նկատի ունենալով, վոր 1925—26 տարվա Անդրկովկասի պետական բյուջեյի մեջ առաջին անգամ մուծվում են վարձավճարի ձևով յերկրի ընդերքից սպասվող հասույթները, նույնպես և կոնցեսսիաներից ստացվող հասույթները, բյուջեն ավելի մեծ չափով արտացոլում է Անդրկովկասի ժողովրդական տնտեսությունը։

Անդրկենտրոնական Նստաշրջանը գտնում է, վոր հետագա տարիները ևս սույն հասույթները պետք է մուծվեն ԱՍՖՍՀ բյուջեյի մեջ։

Անհրաժեշտ է նիշել առևտրից և արդյունաբերությունից ստացվող հասույթների աճումը, վորովհետև յերկրի զարգացող առևտրական շրջանառությունը և վերականգնվող արդյունաբերությունը հնարավորություն են տալիս ժողովրդական տնտեսության սույն ճյուղերին ավելի մեծ չափերով մասնակցելու պետական բեռան կրելուն։ Այս հետևանքը առավել ևս հնարավոր է ընթացիկ տարվա միջոցին, վորովհետև անդրկովկասյան արդյունաբերության մեջ նրան բարձրացնելու և նոր աղբյուրներ ստեղծելու համար մուծվում են խոշոր, միլիոնավոր ռուբլիների, գումարներ։

IV. Շնորհիվ խորհրդային իշխանության գյուղացիության նկատմամբ ունեցած առանձին քաղաքականության, վորը ձգտում է ըստ կարելույն թեթևացնել գյուղացիության հարկային բեռը, 1925—26 թ. գյուղատնտեսական հարկը անցած տարվա համեմատ ավելի քան 50 տոկոսով նվազեցրած է։ Սույնպիսի խոշոր նվազեցում, վոր տեղի չունի վոչ մի այլ Միութենական Հանրապետության մեջ, բացի հիմնական նպատակից՝ արված է և այն պատճառով, վոր, անցյալ տարվա անդրկովկասյան գյուղական ամբողջ տնտեսությանը պատահած տարերային դժբախտության (սառնամանիքների) հետևանքով, հարկավոր եր ոգնել յերկրի գյուղացիու-

թյանը նրա տնտեսությունը վերականգնելու գործում։ Գյուղացիությունը արտոնություններ է ստանում վոչ միայն գյուղատնտեսական հարկի, այլ և արդյունաբեր զբաղման հարկի նկատմամբ (տնայնագործների և արհեստավորների վերաբերյալ արտոնություններ)։ Գյուղատնտեսական հարկի սխառմը պահվելու յե և հետագա 1926—27 տարվա ընթացքում հետագա փոփոխություններով և ներացումներով, վորոնց նպատակն է ավելի խոշոր համապատասխանություն ստեղծել հարկի չափի ու գյուղացիության հարկունակության և արդյունքի մեջ։

V. Անդրկովկասի այլ յեկամուտների աղբյուրների շարքում պետք է առանձին ուշադրություն դարձնել անտառների վրա։ Չնայելով, վոր Անդրկովկասը չափազանց հարուստ է անտառներով, անտառները անցյալ տարիները տալիս էյին պետությանը շատ սակավ արդյունք։ Այս կողմից ԱՍՖՍՀ բոլորովին նման չե այլ Միութենական Հանրապետություններին, ուր, ինչպես որինակ Բելոռուսիայում, անտառից ստացվող յեկամուտները կազմում են հանրապետության հասույթների խոշորագույն մասը։ Անդրկովկասի այսպիսի դրությունը բացատրվում է մի շարք որչեպիսի պատճառներով և ամենից առաջ շնորհիվ այն բանի, վոր միջոցներ չլինելու պատճառով հնարավորություն չկա կարգի բերելու անտառաշինարարությունը և լայն մասշտաբով մշակել յերկրի անտառային հարստությունը։ Չի կարելի լուծելամբ անցնել այն հանգամանքի հանդեպ, վոր գյուղությունները պայմաններում ևս Անդրկովկասի անտառների հարստությունները կարող էյին ավելի յեկամուտ տալ, քան այդ ստացվել է անցյալ տարիները։ Թե ժողովրդական տնտեսության և թե բյուջեյի շահերը անհրաժեշտորեն պահանջում են անհատալ դիմելու Անդրկովկասի անտառների լայն շահագործմանը և պետական բեռը կրելուց խուսափելու դեմ մաքառմանը։ Անտառների շահագործման հարցը ստանում է այս տարի ռեյալ լուծում շնորհիվ այն հանգամանքի, վոր ԱՍՖՍՀ բյուջեն այս տարի դրա համար նախատեսել է համեմատաբար խոշոր գումար։

VI. 1925—26 տարվա պետական բյուջեյի հիմքն է կազմում ամենից առաջ այն սկզբունքը, վոր պետական ծախքերը ազատվեն տեղական բյուջեյին տրվելիք ծախքերից, այս բանի հետևանքով Անդրկովկասի 16 անկարող շրջանների միլիցիան և ժողովրդական դատավորները, վորոնք 1924—25 թվին պահվում էյին պետական բյուջեյի հաշվին, այժմ պահվելու յեն տեղական բյուջեյով։ Նույն

նպատակի համար դրված և տեղական բյուջեյի վրա առաջին և յերկրորդ աստիճանների գալուցների ուսուցիչների պահպանությունը: Բայց հաշվի առնելով Անդրկովկասի տեղական բյուջեյի ծանր դրությունը, Միութենական ժողովուրդները կարելի չե համարել ամրապնդել տեղական բյուջեն, բացի սովորական սուբսիդիաներից, տալով տեղական բյուջեյին տրվող ուսուցիչների պահպանության համար առանձին գոտացիա:

VII. 1925—26 տարվա բյուջեն կառուցված է այն հաշվով, վոր ավելի յետամնաց ժողովրդատների ծառայողների աշխատավարձը յենթարկվի հետագա աճման և փոխանակ առաջին յերեք կուպոնների (7, 8 և 10), վոր գոյություն ունի 1924—25 թվին, այժմ սահմանել միայն յերկու կուպոն (9, 10):

Աշխատավարձի շրջանում հետագա քաղաքականությունը կայանում է նրանում, վոր աշխատավարձը բարձրանա և իրագործվի նրա միաշափությունը:

VIII. Համարել ուղիղ Անդրկովկասի կառավարության քաղաքականությունը, վոր արտահայտվել է նրանում, վոր առաջին հերթին առաջ է տարված յերեք հիմնական ժողովրդատների—Հոլ-ժողովրդատի, Լուսժողովրդատի և Առժողովրդատի—աճումը: 1926—27 տարվա բյուջեն կառուցանելիս վարել նույն քաղաքականությունը, առանձին ուշադրություն դարձնելով ոպերատիվ ծախքերի աճման վրա:

IX. Համարելով ուղիղ գյուղատնտեսության համար արած հատկացումները մեծացնելու հետ միաժամանակ նույնպես հատկացումների ավելացումը վոռոգման համար, վորը Անդրկովկասի պայմաններում բացառիկ նշանակություն ունի, Անդրկենտգործկոմի Նստաշրջանը հանձնարարում է Նախագահությանը 1926—27 տարվա բյուջեն կառուցանելիս նույն նպատակի համար հետագայում ևս լայնացնել հատկացումները:

X. Ընդունելով, վոր ելեքտրիֆիկացիայի համար բաց թողած գումարները չափազանց անբավարար են ամբողջապես իրագործելու ելեքտրիֆիկացիայի ծրագիրը Անդրկովկասում, Նստաշրջանը հանձնարարում է Անդրկովկասի կառավարությանը առանձին ուշադրություն դարձնել յերկրի ելեքտրիֆիկացիայի հետագա զարգացման վրա:

XI. Ծանապարհային գործը Անդրկովկասում յերկրի տեղադրական առանձնահատկության պատճառով, ամբողջ ժողովրդա-

կան տնտեսության, մանավանդ գյուղատնտեսության համար, ունի բացառիկ նշանակություն:

Սճուկային և սայլի ճանապարհների այժմյան դրությունն այնպես է, վոր նրանց վերականգնման համար պահանջվում են հատկացումներ, վորոնք գերազանցում են վոչ միայն Անդրկովկասի, այլ առաջիկա տարիները նույնիսկ Միության բյուջետային կաբիլությունները:

Այդ պատճառով, թեև ամբողջ Միության համար սույն նպատակի համար հատկացված են աննշան գումարներ, ճանապարհների ժողովրդատի բյուջեյով Անդրկովկասի համար հատկացրած է խոշոր գումար և բացի դրանից Անդրկովկասի հանրապետական ճանապարհների համար, իբրև առանձին գոտացիա, վոր գոյություն չունի մյուս Միութենական Հանրապետությունների բյուջեներում, հատկացված է 1.700.000 ռ., բայց և այս միջոցները ամենևին բավական չեն բավարարելու համար հասունացած կարիքները և այդ պատճառով այժմ միակ միջոցն այն է, վոր ինքը ազգաբնակչությունը այս ուղղությամբ իր վրա վերցնի բեռի մի մասը: Անդրկենտգործկոմի Նստաշրջանը հանձնարարում է Նախագահությանը մանրամասն մշակել այս հարցը և գործնականապես նրան իրագործել:

XII. Բնակարանային ձգնաժամը Անդրկովկասի քաղաքներից շատերի համար սպառնալի բնույթ է ստանում:

Յերկրորդ Նստաշրջանը հանձնարարում է կառավարությանը 1926—27 տարվա բյուջեյում բնակարանային ձգնաժամը նվազեցնելու համար նախատեսել բավարար հատկացումներ:

XIII. Ընդունելով, վոր 1925—26 տ. պետական բյուջեյով նշանակած 300.000 ռուբլին անբավարար է 1925—26 տարվա բնթացքում գործադրության դեմ մաքառելու համար, Նստաշրջանը հանձնարարում է Նախագահությանը հարց հարուցանել ՍՍՀ Միության Կենտգործկոմի առաջ սույն նպատակի համար լրացուցիչ միջոցներ բաց թողնելու վերաբերյալ:

XIV. Այն ժամանակ, յերբ ԱՍՖՍՀ պետական բյուջեն բավականին ամրապնդվել է, Անդրկովկասի տեղական բյուջեյի դրությունը շարունակում է մնալ չափազանց ծանր: 1924—25 տարվա տեղական բյուջեյի կատարման տվյալները ցույց են տալիս, վոր բոլոր Միութենական Հանրապետություններում կատարման տոկոսը կազմում է 100 և ավելի, ինչպես որինակ Ուկրաինայում և Բելո-ռուսիայում: Անդրկովկասում նա ամենալավ ղեպքում հասնում է

85 տոկոսի: Այսպիսի անբավարար կատարումը ամենից առաջ բացատրվում է նրանով, վոր տեղական բյուջեն չունի տնտեսական պատվանդան և Խորհրդային իշխանություն սահմանվելուց հետո առաջին անգամն է, վոր իրագործվում է կյանքի մեջ, մինչդեռ մյուս Միութենական Հանրապետություններում նա ունի իր անցյալը (գեմատվո):

Բացի այս հիմնական պատճառներից, 1924—25 թ. տեղական բյուջեյի վրա ազդեցություն ունեցավ այն հանգամանքը, վոր Միութենական Կառավարության վերջնամբ նրանից հանվեց խոշոր հասույթավոր աղբյուրների մի ամբողջ շարք:

Այս բոլորի հետևանքով տեղական բյուջեն դառավ բացառապես սպառողական բյուջե, չունենալով առաջիկա տարիների ընթացքում վորոշ հեռանկար:

1925—26 տարվա տեղական բյուջեն կազմված է առավել ևս ծանր պայմաններում. բացի մատնանշած պատճառներից, վորոնք պահել են իրենց նշանակությունը և այս տարվա համար, անկարելի չէր խուսափել ծախսի մասի բնական աճումից:

Այս բոլորի հետևանքով 1925—26 տ. բյուջեն ավելի խորացրեց իր սպառողական բնույթը և միաժամանակ նշանավոր կերպով ավելացավ բացը:

Անդրկենտրոնական Նստաշրջանը մատնանշում է, վոր գոյացած բացը ժամանակավոր, բացառիկ յերևույթ է, այլ ունի յերկարատև, տարիներ շարունակվող, բնույթ:

Նստաշրջանը, աչքի առաջ ունենալով այս դրությունը, հանձնարարում է Նախագահությանը միջնորդություն հարուցանել ՍՍՀ Միության Կենտրոնականի առաջ ծածկելու ԱՍՖՍՀ 1925—26 տ. տեղական բյուջեյի բացը:

Միաժամանակ Նստաշրջանը հանձնարարում է Նախագահությանը առանձին ուշադրություն դարձնել ամբապնդելու և լայնացնելու Անդրկովկասի տեղական բյուջեյի հասույթային պատվանդանը, մի կողմից վերաքննելով տեղական գործկոմիերի ստացվածքային իրավունքները, մյուս կողմից Միութենական Գործկոմի առաջ միջնորդություն հարուցանելով տեղական ֆինանսների ժամանակավոր Կանոնադրության վերաքննության համար:

XV. ԱՍՖՍՀ 1925—26 տարվա բյուջեն կազմելու և Կենտրոնում ու Անդրկովկասում անցնելու փորձը ցույց է տալիս, վոր յեթե Անդրկովկասյան Հանրապետություններում և ԱՍՖՍՀ բոլոր ժողովուրդներում ժամանակին նախապատրաստված լինեյին, կա-

րելի կլինեիր խուսափել աշխատանքի մի շարք պակասություններից:

Նստաշրջանը հանձնարարում է Կենտրոնականի Նախագահությանը ձեռք առնել ամեն միջոց, վոր ժամանակին դիմեն 1926—27 տարվա բյուջեների նախապատրաստմանը, ուշի ուշով հիմնավորելով բոլոր հայտերը, վորպեսզի Անդրկովկասյան Կառավարությունը իր հերթին կարողանա ներկայացնել ՍՍՀ Միության գերագույն մարմինների տրամադրությանը բոլոր անհրաժեշտ նյութերը:

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Մ. Յիսակյան

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ա. Շահվերդյան

1926 թ. հունվարի 29-ին:
Յերևան:

5. ԱՍՖԽՀ Սահմանադրությունը բյուջեային իրավունքներին վերաբերող գլխով լրացնելու յեվ ԱՍԽՀ, ՀՍԽՀ յեվ ՎՍԽՀ մեջ գոյություն ունեցող՝ ԱՍՖԽՀ Ֆինանսների ժողովրդական կոմիտեի և Լիազորների վարչությունները սույն Հանրապետությունների Ֆինանսների ժողովրդական կոմիտեի անդամների վերակազմելու մասին ընկ. Ա. Շահվերդյանի զեկուցմանը վերաբերյալ:

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, լսելով զեկուցումները՝

ա) ԱՍՖԽՀ Սահմանադրությունը բյուջեային իրավունքներին վերաբերող գլխով լրացնելու մասին և ի նկատի առնելով Բանվորների, Գյուղացիների, Կարմիր Ձինվորների և Նավաստիների Պատգամավորների Խորհուրդների Անդրկովկասյան 3-րդ Համագումարի հանձնարարությունը ներկայացնելու սույն զրույթը սույն 2-րդ Նստաշրջանի վերջնական հաստատմանը և

բ) ԱՍԽՀ, ՀՍԽՀ և ՎՍԽՀ մեջ գոյություն ունեցող՝ ԱՍՖԽՀ Ֆինանսների ժողովրդական կոմիտեի և Լիազորների վարչությունները սույն Հանրապետությունների Ֆինանսների ժողովրդական կոմիտեի անդամների վերակազմելու մասին,

վ ո ռ ո շ ու մ ե.

1. Հաստատել Բյուջեային իրավունքների մասին զրույթը զեկուցած խմբագրությամբ, մուծելով նրան ԱՍՖԽՀ Սահմանադրության մեջ հետևյալ ձևով.

Գ Լ Ո Ի Խ IX.

Հոդ. 54. ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեն (ԱՍՖԽՀ լիեմտացույցը) մտնում է ՍԽՀՄ միասնական պետական բյուջեյի կազմի մեջ:

Հոդ. 55. ԱՍԽՀ, ՎՍԽՀ և ՀՍԽՀ բյուջեները սույն Հանրապետությունների Կենտրոնականների կողմից հաստատվելուց հետո մտնում են իբրև բաղկացուցիչ մաս ԱՍՖԽՀ միասնական բյուջեյի մեջ:

Հոդ. 56. ԱՍՖԽՀ միասնական պետական բյուջեն հաստատում է Անդրկենտրոնական ՍԽՀՄ ժողովրդական միջոցով ներկայացնում է ՍԽՀՄ Կենտրոնականին՝ մոցնելու համար նրա կողմից հաստատվող ՍԽՀՄ միասնական պետական բյուջեյի մեջ:

Հոդ. 57. Անդրկենտրոնական համամիութենական բյուջեային որենսդրության սահմաններում վորոշում է ԱՍՖԽՀ և նրա կազմի մեջ մտնող Հանրապետությունների բյուջեային իրա-

վունքները, որենսդրություններ և սահմանում ԱՍՖԽՀ միասնական բյուջեն կազմելու, քննելու, հաստատելու և կատարելու մասին, նույնպես սահմանում է բյուջեային որենսդրության բնագավառին վերաբերող այլ նորմաներ:

II. ԱՍՖԽՀ Սահմանադրության IX գլուխը և 54, 55, 56 հոդվածները փոխարինել X գլխով և 58, 59 և 60 հոդվածներով:

III. ԱՍԽ, ՀՍԽ և ՎՍԽ Հանրապետություններում գոյություն ունեցող՝ ԱՍՖԽՀ Ֆինանսների ժողովրդական կոմիտեի և Լիազորների վարչությունները վերակազմել սույն Հանրապետությունների Ֆինանսական ժողովրդական կոմիտեի անդամների:

IV. ա) ԱՍՖԽՀ Սահմանադրության 51-րդ հոդվածը փոփոխել, ավելացնելով «Սոցիալական Ապահովության ժողովրդական կոմիտե» խոսքերից հետո «Ֆինանսների ժողովրդական կոմիտե» խոսքերը. «Լիազորներ» խոսքը փոխարինել «Լիազոր» խոսքով և հանել «և Ֆինանսների Անդրկովկասյան ժողովրդական կոմիտեի անդամ» խոսքերը:

բ) ԱՍՖԽՀ Սահմանադրության 52-րդ հոդվածը փոփոխել, փոխարինելով «Աշխատանքի, Բանվորա-Գյուղացիական ժողովրդական կոմիտեի անդամներ» խոսքերը «Աշխատանքի, Բանվորա-Գյուղացիական Տեսչություն և Ֆինանսների ժողովրդական կոմիտեի անդամները» խոսքերով:

V. ԱՍՖԽՀ ժողովմանների մասին Ընդհանուր Կանոնադրության առաջին հոդվածի «ա» կետը փոփոխել, խմբագրելով հետևյալ ձևով. «Համաֆեդերատիվ ժողովրդական կոմիտեի անդամները միասնական և ամբողջ ԱՍՖԽՀ համար»:

VI. Նույն Կանոնադրության 2-րդ հոդվածը խմբագրել հետևյալ ձևով՝ «ԱՍՖԽՀ Համաֆեդերատիվ ժողովրդական կոմիտեի անդամներ և ներքին Առևտրի ժողովրդական կոմիտեի անդամներ» և 3-րդ հոդվածը խմբագրել այսպես՝ «ԱՍՖԽՀ միացյալ ժողովրդական կոմիտեի անդամներ են Աշխատանքի, Բանվորա-Գյուղացիական Տեսչության և Ֆինանսների ժողովրդական կոմիտեի անդամները»:

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահ՝ Մ. Յիսակյան

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Ա. Շահվերդյան

1926 թ. հունվարի 29-ին:
Յերևան:

6. Մի նասմեղանից մինչեւ մյուսը նախագահության կողմից ընդունած Անդրկենսագործկոմի դեկրետները հաստատելու մասին ընկ. Ա. Շահվերդյանի զեկուցման վերաբերմամբ:

Անդրկոմկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, լսելով յերկրորդ գումարման 2-դ նստաշրջանից մինչև III գումարման 2-դ նստաշրջանը Անդրկենսագործկոմի նախագահության կողմից ընդունած կարևորագույն վորոշումների մասին զեկուցումը, վո-ր ո շ ու մ ե.

Հաստատել Անդրկենսագործկոմի 2-դ գումարման 2-դ նստաշրջանից մինչև 3-դ գումարման 2-դ նստաշրջանը Անդրկոմկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կողմից ընդունած ստորև բերած հետևյալ վորոշումները.

1. Դյուղին գրականություն և թղթակցություն հայթայթելու գործի կազմակերպման մասին (1924 թ. սեպտեմբերի 8-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1924 թ., № 6, հոդ. 212. 3. Բ. 1924 թ. սեպտեմբերի 12-ի № 675):

2. Կոմկասյան Կարմրադրոշ Բանակի ազգային դիվիզիաների ռազմական տրեքունալներին և դատախազության վերաբերող Կանոնադրությունը հաստատելու և գործադրության մտցնելու մասին (1924 թ. սեպտեմբերի 22-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1924 թ., № 7, հոդ. 229. 3. Բ. 1923 թ. հոկտ. 2-ի № 692):

3. Անդրկենսագործկոմի և ԱՍՖՖՆՆ Ժողկոմխորհի անտառները հրդեհից պաշտպանելու մասին (1924 թ. նոյեմբերի 24-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1924 թ. № 9, հոդ. 293. 3. Բ. 1924 թ. դեկտեմբերի 2-ի № 742):

4. Անդրկենսագործկոմի և ԱՍՖՖՆՆ Ժողկոմխորհի պետական հողային գույքերի վարձակալության մասին (1924 թ. դեկտեմբերի 22-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1924 թ. № 9, հոդ. 320. 3. Բ. 1924 թ. դեկտեմբերի 24-ի № 761):

5. Նախագորակոչյանների և տերրիտորիալ զորամասերի փոփոխական կազմի կարմիր բանակայինների անգրագիտության լի՛վիդացիայի մասին (1925 թ. հունվարի 5-ին, ԱՍՖՖՆՆ Որ.

Հավաք. 1925 թ., № 1, հոդ. 325. 3. Բ. 1925 թ. հունվարի 7-ի № 772):

6. Գավառակային և ռայոնական (վոլոստի) գործկոմների ֆինանսական-հարկային բաժինների մասին (1925 թ. հունվարի 19-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1925 թ., № 1, հոդ. 345. 3. Բ. 1925 թ. հունվարի 30-ի № 791):

7. Գավառական ֆինանսական բաժինների Կանոնադրության հաստատման մասին (1925 թ. հունվարի 19-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1925 թ., № 2, հոդ. 358. 3. Բ. 1925 թ. փետրվարի 7-ի № 798):

8. ԱՍՖՖՆՆ տերրիտորիայում մրգից և խաղողից քաշվող սպիրտի ռեկտիֆիկացիայի վերաբերյալ պետական մենաշնորհ սահմանելու մասին (1925 թ. հունվարի 19-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1925 թ., № 1, հոդ. 347. 3. Բ. 1925 թ. հունվարի 31-ի № 792):

9. ԱՍՖՖՆՆ տերրիտորիայի վրա գտնվող Ֆինժողկոմի գան. ձարկոմների վերաբերյալ սահմանած Կանոնադրության հաստատման մասին (1925 թ. հունվարի 19-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1925 թ., № 2, հոդ. 370. 3. Բ. 1925 թ. փետրվարի 24-ի № 812):

10. ԱՍՖՖՆՆ, ՀՍՖՖՆՆ և ՎՍՖՖՆՆ Առողջապահության Ժողկոմների Լիազորի Անդրկոմկասյան յերկաթուղիների առողջապահական վարչություն կազմակերպելու մասին (1925 թ. փետրվարի 2-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1925 թ., № 3, հոդ. 376. 3. Բ. 1925 թ. մարտի 5-ի № 819):

11. ԱՍՖՖՆՆ և նրա կազմի մեջ մտնող հանրապետությունների բյուջետային իրավունքների մասին (1925 թ. 27-ին ապրիլի, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1925 թ., № 5, հոդ. 435):

12. Անդրկենսագործկոմի ԱՍՖՖՆՆ բյուջետային իրավունքներին վերաբերյալ վորոշման 32-րդ հոդվածը լրացնելու և Անդր-ժողկոմի նախահաշվով նախատեսած վարկերի մի պարագրաֆից մյուսը տեղափոխելու կարգի մասին (1925 թ. ոգոստոսի 8-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1925 թ., № 8, հոդ. 480. 3. Բ. 1925 թ. ոգոստոսի 11-ի № 948):

13. «Տեղական ֆինանսների մասին Ժամանակավոր Կանոնադրության» խախտումներին վերջ տալու միջոցների մասին (1925 թ. մայիսի 27-ին, ԱՍՖՖՆՆ Որ. Հավաք. 1925 թ., № 5, հոդ. 431. 3. Բ. 1925 թ. մայիսի 28-ի № 886):

14. Շինարարությունը զարգացնելու նպատակով Շամախի

19-70562

քաղաքի բնակիչներին հարկային արտոնություններ տալու մասին (1925 թ. հունիսի 1-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 6, հոդ. 440, 3. Բ. 1925 թ. հունիսի 12-ի № 898):

15. Շինարարությունը խրախուսելու նպատակով Գորի քաղաքի յերկրաշարժից ֆնասված բնակիչներին հարկային արտոնություններ տալու մասին (1925 թ. սեպտեմբերի 28-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 10, հոդ. 501, 3. Բ. 1925 թ. հոկտեմբերի 2-ի № 992):

16. Պետական գույքերը պետական և տեղական նշանակություն ունեցող գույքերի բաժանելու մասին (1925 թ. հունիսի 9-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 6, հոդ. 444, 3. Բ. 1925 թ. հունիսի 14-ի № 900):

17. ԱՍՖՆՀ Ֆիզիքական Կուլտուրայի Գերագույն Խորհրդի Կանոնադրությունը հաստատելու մասին (1925 թ. հունիսի 9-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 6, հոդ. 446, 3. Բ. 1925 թ. հունիսի 16-ի № 901):

18. Զրային Տնտեսության Անդրկովկասյան և Հանրապետական Վարչությունների Կանոնադրությունը հաստատելու մասին (1925 թ. հուլիսի 13-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 7, հոդ. 465, 3. Բ. 1925 թ. հուլիսի 19-ի № 930):

19. Գործադուրկներին աշխատանքային ոգնություն հասցնելու համար Աշխատանքի Բիրժաների կոմիտեների կողմից կազմակերպվող ձեռնարկությունների և կոլլեկտիվների մասին (1925 թ. հուլիսի 13-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 7, հոդ. 467, 3. Բ. 1924 թ. հուլիսի 24-ի № 934):

20. Բանվորների, ծառայողների և զինվորական ծառայողների ընտանիքների պակասավոր անդամների ապահովության մասին (1925 թ. հուլիսի 13-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 8, հոդ. 477, 3. Բ. 1925 թ. ոգոստոսի 6-ի № 944):

21. Անդրկովկասյան յերկաթուղիների Կանոնադրության 74-դ հոդվածի ծանոթությունը փոփոխելու մասին (1925 թ. սեպտեմբերի 28-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 10, հոդ. 500, 3. Բ. 1925 թ. հոկտեմբերի 2-ի № 992):

22. Խորհուրդների և Խորհուրդների Համագումարների առաջիկա ընտրությունները կատարելու մասին (1925 թ. հոկտեմբերի 12-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 10, հոդ. 506, 3. Բ. 1925 թ. հոկտեմբերի 14-ի № 1002):

23. Ընտրությունները նախապատրաստելու և ընտրական

կամպանիան կատարելու համար ԱՍՆՀ, ՀՍՆՀ և ՎՍՆՀ Կենտգործկոմերի կողմից Անդրկենտգործկոմի նախագահությունը հաշիվ տալու մասին (1925 թ. նոյեմբերի 9-ին, ԱՍՖՆՀ Որ. Հավաք. 1925 թ., № 11, հոդ. 540, 3. Բ. 1925 թ. նոյեմբերի 12-ի № 1026):

Անդրկովկ. Կենտրոն. Գործադիր Կոմիտեյի նախագահ՝
Մ. Յիսակյայ

Անդրկովկ. Կենտր. Գործ. Կոմիտեյի քարտուղար՝
Ա. Շահվերդյան

1926 թ. հունվարի 29-ին:
Յերևան:

7. Յերեվանի Բաղրամյան Ժողովրդական Տունը կառուցանելու մասին:

Անդրկենտգործկոմի անդամները, ժողովվելով Հայաստանի ՍՍՀ մայրաքաղաքում III գումարման 2-դ Նստաշրջանի, խորին բավարարությունով և ուրախությամբ նշում են առաջադիմություն անտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում մի այնպիսի յերկրում, վորը խոշտանգված եր իմպերիալիզմի կործանարար և քայքայիչ քաղաքականության շնորհիվ: Նշելով վերածնվող յերկրի շինարարների առաջ կանգնած որյեկտիվ արգելքները, նստաշրջանը միևնույն ժամանակ հնարավորություն ունեցավ տեսնելու բնակարանային այն բացառիկ կարիքը, վորի մեջ գտնվում ե մայրաքաղաքի, Յերևանի, աշխատավոր ազդաբնակչությունը, և նկատելու քաղաքի թատրոնի միակ շինության անձկությունը, ուր տեղի ունեյին նիստերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր Հայաստանի աշխատավորների համար առայժմ դժվար ե սեփական ույժերով և միջոցներով իրագործել կուլտուրական կենտրոնի շինության կառուցումը, Նստաշրջանը Անդրկենտգործկոմի վրաստանի և Ազըրբեյջանի անդամների առաջարկությամբ անհրաժեշտ ե համարում, վոր ընթացիկ և առաջիկա բյուջետային տարիների ընթացքում ավարտված լինի Յերևանի ժողովրդական Տան շինությունը, հարմարեցրած ամենամեծ չափերով սպասավորելու աշխատավոր ազդաբնակչության կուլտուրական կարիքները, և հանձնարարում ե Անդրկենտգործկոմի Նախագահությանը, համաձայնության գալով ՀՍՍՀ Նախագահության հետ, իրագործել սույն վորոշումը:

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Մ. Յխակյա

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ա. Շանվերդյան

1926 թ. հունվարի 29-ին:
Յերևան:

